

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՆԱՐԵԿԱՑՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԺԱՆՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Գ. «Մատեան ռդրերգութեան» երկի ժանրային բնոյթը

Մատեանի ժանրային բնոյթը յատուկ ֆննութեան հարց չի դարձել: Մինչդեռ առանց հարցի լուսաբանման թերի կը լինէր ոչ միայն Նարեկացու ստեղծագործութեան ժանրային կազմի, այլև առ հասարակ միջնադարեան հայ գրականութեան ժանրային համակարգի պատկերը: Արդարացի չէր լինի սակայն ասել, թէ գրականութեան պատմաբանները եւ տեսաբանները չեն փորձել պատասխանել այդ հարցին: Բայց նրանք տուել են այնպիսի պատասխաններ, որոնք իրականում հարցը ոչ թէ լուծել, այլ աւելի են խնկել: Բանն այն է, որ գրականագիտութեան մէջ առհասարակ յատկութիւն չկայ ժանրերի եւ նրանց տարատեսակների գիտական բնութագրման հարցում: Խօսքը գրական սեռերի՝ էպոսի, լիրիկայի եւ դրամայի մասին չէ, այլ վերաբերում է իւրաքանչիւր սեռի տեսակներին: «Ժանրի ըմբռնման հարցում միասնութիւն չկայ»⁽¹⁾ - գրում է Էդ. Զրբաշեանը: Իսկ թէ «ինչով են ժանրերը տարբերուում մէկը միւսից, ընդհանուր ինչ սկզբունքներով պէտք է տարբերակել եւ դասակարգել նրան - այս հարցի լուծումը բախում է մեծ դժուարութիւնների»⁽²⁾, - գրում է Գ. Պոսպետովը: Չծաւալուելով՝ ասեմ միայն, որ ժանրերի տարբերակման սկզբունքը պէտք է որոնել նրանց տիպաբանական յատկանիշների մէջ՝ ձեւի եւ բովանդակութեան, թեմատիկ իւրայատկութեան, գեղարուեստական

պատկերի կառուցման եւ յօրինուածքի ընդհանուր տարրերի մէջ: Տիպաբանական այս յատկանիշները եւս քարացած չեն եւ ունեն յարաբերական կայունութիւն: Դարաշրջանից դարաշրջան փոխուում է ոչ միայն գրականութեան ժանրային կազմը, այլև միեւնոյն ժանրի յատկանիշների փոխադարձ յարաբերակցութիւնը:

Մատեանի ժանրային բնոյթի հարցը ձեւակառուցուածքային խնդիր չէ, այլ ունի ստեղծագործական հոգեբանութեան եւ գրական կողմնորոշման նշանակութիւն: Ասել, թէ Գրիգոր Նարեկացին աղօթք է գրել՝ նրան կապում ենք կրօնական հոգեբանութեան եւ միջավայրի հետ, ասել, թէ ռդր է գրել՝ նրան կապում ենք կեանքի եւ ժողովրդի կեցութեան ու նախատարի հետ: Այլ կերպ ասած՝ երկի ժանրային բնութագիրը դառնում է բովանդակութեան բացայայտման, հեղինակի գեղագիտական կողմնորոշման բանալի:

Մատեանի ժանրային ամենահին բնութեանգիրը տուել է Ներսէս Լամբրոնացին: Նարեկացու վարքի մէջ խօսելով բանաստեղծի գրական ժառանգութեան մասին, նա յիշատակում է նաեւ Մատեանը. «Եւ խաւսեցաւ գԻրքս աղաւթից ըստ հայցման խնդրոյ կրաւնաւոր եղբարց բանս ՂԵՆ» (ՄՄ, ձեռ. 1568, էջ 119 ք): Լամբրոնացին Մատեանը կոչում է գիրք աղօթից, որ համարժէ է աղօթագիրք կամ աղօթամատեան հասկացութիւններին: Այսպէս կոչելու համար հիմք է տուել

Նարեկացիին: Մատենան ընդարձակ խորագրում մա իր երկը կոչել է մատենան ողբերգութեան, որը կարող է լինել ամբօշկի Վերքերի գորաւոր սպեղանի, «առիթօ՛ք արտասուաց, պատճառք աղաւթից»: Մատենան Գ. գլխում Նարեկացիին խօսում է այն մասին, թէ ում է հասցեագրում իր երկը եւ թուարկման երկար շարքն աւարտելով՝ ասում է, որ ինքը ումանց համար աղբիւսանքներ, ումանց համար խրատներ է գրել, որպէս զի բոլորն էլ իր խօսքերով դիմեն աստծուն.

Որոց ումանց՝ աղբիւս աղաչանաց, եւ ումանց՝ խրատ բարեաց
Առ դէմս աղաւթից այսու մատենիւ
մատակարարեսցի ...

(Բան Գ ք)

Կամ՝

Դրեսցես աղաւթս մշտամատոյցս
Ջայս մորընծայ տառ ողբմանդերս՝
Բախտագին ձայնի ողբերգարկութեան այսք
մատենի ...

(Բան ՀԱ Ե)

Եւ վերջապէս՝

Եւ որ ընթերցցի գայս աղբիւս ձայնի՝
Մաղթանաց գոչման աղաւթից հայցման ...

(Բան Ղ զ)

Այս եւ մնաւ տողերը հիմք են հանդիսացել, որ Մատենանը դարեր շարունակ կոչուէր գիրք աղօթից, աղօթից մատենան, աղօթական գիրք, կտակ մաղթանաց, աղօթամատոյց գիրք եւ այլն: Ըստ այս աւանդոյթի՝ Մատենանի առաջին տպագրութիւնը (Կ. Պոլիս, 1700-1702) ունի «Գիրք աղօթից սրբոյն Դրիգորի Նարեկացւոյ հոգեկիր հոնտորի» խորագիրը, որը պահպանուել է մի շարք վերահրատարակութիւնների ժամանակ(3):

Մատենանն աղօթագիրք կամ աղօթամատենան են համարել շատերը՝ Հ. Նախանը, Մ. Զամչեանը, Գ. Աւետիքեանը, Ղ. Ալիշանը, Գ. Զարբանալեանը, Ծ. Դուրեանը, Թ. Դուշակեանը, Ս. Քէշիշեանը եւ ուրիշներ: Սա քիտու էր մաւ միջնադարեան աւանդոյթից: Դոնեւս քրիստոնէ-

ութեան յաղթանակի առաջին դարերից սկսած՝ եկեղեցու հայրերը համոզուած էին, որ մարդու ողջ էութիւնը, նրա հոգեկան բոլոր ուժերը, նրա յուզական եւ գեղարուեստական ամբողջ փորձն ու կարողութիւնը պէտք է ուղղուած լինեն աստծուն ճանաչելու, նրա հետ հաղորդուելու, նրան նմանուելու նպատակին: Ուստի գեղարուեստական ստեղծագործութեան քարճրագոյն ձեւը դառնում է աղօթքը, սրտի խորքերից քիտած խօսքն առ Աստուած: «Աղօթքը դառնում է քրիստոնէական գրական ստեղծագործութեան կարեւոր ժանրը: Նա ակտիւօրէն ազդել է վաղ քրիստոնէական եւ միջնադարեան արուեստի բոլոր տեսակների եւ ժանրերի բնոյթի վրայ, որոշել պաշտամունքային ողջ գործողութեան առանձնայատուկ, աղօթական տրամադրութեանը»(4) - գրել է Վ. Բիչկովը՝ ուշ անտիկ շրջանի գեղագիտութեանը նուիրած իր մեծարժէք աշխատութեան մէջ:

Բայց եթէ «աղօթքի մէջ լաւ է ունենալ սիրտ մը առանց խօսքերու - ինչպէս նկատել է մի բանասէր - քան թէ խօսքեր առանց սրտի» (5), կամ Նարեկացու արտայայտութեամբ՝ «գիտաչա հոգւոյ եւ գագդոււմ շնչոց հեծութեան», «զկամս խորհրդոց եւ գլաւարութիւն խորութեան սրտից» (Բան Ի ը), ապա սա վերաբերում է աղօթարարին եւ ոչ թէ բանաստեղծին: Բանաստեղծը ոչ թէ աղօթում է իր համար, այլ աղօթ է գրում: Նա գրում է իր աղօթքը՝ իր եւ ուրիշների համար: Նրա խօսքը պէտք է մեքգործի մարդկանց յուզաշխարհի վրայ: Նարեկացիին մէկ անգամ չէ, որ ասում է, թէ ինքը խօսում է բոլորի փոխարէն: Բայց մա խօսում է իր անուինց, եւ անհատականի եւ համամարդկայինի այս կապը գրեթէ անտարրալուծելի է Նարեկացու Մատենանում: Աղօթքը եմբաղրում է անկեղծութեան վերին աստիճան: Նարեկացիին օգտուել է աղօթքի՝

իրբել գրական տեսակի ընձեռած հնարատրութիւնից:

Մատեան, սակայն, աղօթքների գիրք չէ՝ ուղղակի իմաստով: Աղօթքը հաւատացեալի հաղորդուելն է Աստծու հետ: Աղօթքը Աստծու հանդէպ մարդու տածած երկիւղի եւ քարեպաշտութեան, հաւատի, սիրոյ եւ յոյսի արտայայտութիւն է՝ Աստծուց շնորհ եւ քարիք հայցելու, չարը վանելու, փորձութիւնից պահպանելու ակնկալութեամբ: Աղօթքը սովորաբար բաղկացած է Աստծուն յղուած փառաբանական ուղեբճից, մարդու արարքների եւ մեղքերի խոստովանութիւնից եւ քարեխօսութեան աղերսանքից: Աղօթքը օրհնաբանութիւն է եւ խնդրումով: Աղօթքներն իրար մկատմամբ անկախ են, ինքնուրույն: Որոշ վերապահութեամբ մաքուր աղօթքներ կարելի է համարել Մատեանի միայն առանձին գլուխներ (ԺԶ, ԽԱ, ԽԲ, ԽԳ, ԶԳ, ԶԹ) եւ մի քանի գլուխների առանձին հատուածներ (ԺԲ գ, ԻԷ ք եւ Ե, ԻԸ Ե, գ եւ Է ԼԳ գ եւ Է, ԼԴ ք եւ գ) եւ այլն:

Մատեանիմ յատուկ է զգացմունքների, մտքերի, տրամադրութիւնների եւ գիտակցութեան ներքին միասնութիւն: Նրա իւրաքանչիւր գլուխ անկախ է յարաբերականօրէն: Իրականում, սակայն, տարբեր գլուխների միջեւ կայ ներքին միասնութիւն, հոգու կենսագրութիւն: Նրանք յաջորդում են միմեանց՝ չխախտելով այդ կապը, միւղաւորուելով իրարից՝ մրանք միահիւստում իրար: Այդ միասնութեան մէջ մի հոգեվիճակ մախապատրաստում է յաջորդը: Այսպէս՝ առաջին գլուխը՝ Նարեկացիի սկսում է ողբահեծ հառաչանքով, որը ծնում է մեղքի գիտակցման եւ անող դատաստանի վախի ծանր ապրումներից: Երկրորդ գլխում մա անցնում է իր անձի դատապարտութեանը՝ հոգին մատնելով անփարատ յուսահատութեան,

բայց աւարտում է ապաւինելով Աստծու գթասիրութեանը: Երրորդ գլխում՝ տրտմութիւնն ու երկիւղը մի պահ փարատած՝ զուարթ հոգով օրհնեցում է աստծուն, ապա անցնում իր երկի մպատակի քացատրութեանը եւ աւարտում է քանաստեղծական շնորհի հայցմամբ: Իրականում այստեղ միայն աղօթքի տարրեր կան, մինչդեռ գլուխների ներքին միասնութիւնը շաղկապուած է թէ՛ բնարական մոյմ տրամադրութեամբ եւ թէ՛ հոգեվիճակների անցման բնականութեամբ: Մատեանը բնարական ողբերգութիւն է՝ գրուած մեմախօսութեան, խոստովանութեան ձեւով: Աղօթքն այդ մեմախօսութեան ձեւերից մէկն է միայն՝ մոյմման բնական, որքան եւ խոստովանութիւնը:

Մատեանի կառուցումով միատարր չէ: Նարեկացիի յաճախ է դիմում ընթերցողին, ստեղծելով կենդանի հաղորդակցման ամմիջականութիւն: Մի շարք գլուխներում (Գ, Զ, ԺԲ, ԻԲ, ԼԸ, ՄԴ, ՀԱ, ՀԲ, ԶԸ) Նարեկացիի յայտնում է իր երկի մպատակի, դերի ու մշանակութեան մասին, մի քանի գլուխների մէջ (ԺԵ, ԻԵ, ԻԶ, ԼԹ, ԽԷ, ԿԸ) զգուշացնում է իր խօսքի յուզական հմչերանգը փոխելու, ժողովրդական ողբի ձեւերին հետեւելու մասին, իսկ սրանցից քացի կան ԼԳ, ԼԴ, ՀԵ, ԼԲ եւ ԼԳ դաւանաբանականմեկնաբանական ծաւալուն գլուխները, որոնք թեւ զաղափարապէս չեն հակասում Մատեանի րովանդակութեանը, սակայն յուզականօրէն չեն մերում մրա խոհա-բնարական շնչին ու ոգուն:

Մատեանը, ինչպէս ասուեց, դեռեւ 13րդ դարում կոչուել է Նարեկ: 1774թ. Կ. Պոլսի տպագրութիւնը խորագրուած է՝ «Նարեկ. Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացոյ հոգեկիր հռեւորի», իսկ 1789թ. Վենետիկի տպագրութիւնը՝ «Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկացոյ Գիրք աղօթից, որ կոչի Նարեկ»: Վենետիկի

1840թ. տպագրութիւնն ունի այսպիսի խորագիր՝ «Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատեան ողբերգութեան»։ Ընդգծուած բառերն արտածուած են Մատեանի խորագրից։ Սա Նարեկացու՝ իր երկի ժանրային այն բնութագիրն է, որը, ըստ իս, առաւել ճշգրիտ է արտայայտում Մատեանի ժանրային բնույթը։

1895թ. լոյս տեսաւ Ա. Չոպանեանի «Գրիգոր Նարեկացի» ուսումնասիրութիւնը։ Գտնելով, որ «ամբողջ միաստիկականութիւն է այդ գործը եւ ամբողջ ֆնարականութիւն», Չոպանեանը Մատեանը կոչում է «միաստիկականութեան ջաւագին վէպ մը», ուր վէպ բառը պարզապէս համարժէ է երկ բառին։ Նա իրաւացի է, որ «Նարեկացին գրեթէ միշտ կը նախընտրէ ներդրողին ֆնարական ձեւը», ուր բանաստեղծի խօսքը «աստուածաշնչական օրհներգութեան կամ նախնական բանաստեղծութեանց գովաբանական աղօթքի ձեւը կ'առնէ»։(6) Այլ կերպ ասած՝ Մատեանի մէջ միաստիկականութիւնը ժանրային ժանրի՝ աղօթք, ներդրող, մեկնութիւն, օրհներգութիւն եւ այլն։

Մ. Արեղեանը գտնում է, որ Մատեանը «ապաշխարութեան երգ է եւ զարգացումն է ապաշխարութեան հոգեւոր եւ ընդհանրապէս «ողորմեա» կոչուած շարականների։ Դա էլ իրօք այն տխուր ու լալա հառաչ հոգեւոր երգերի կատարելատիպն է, միայն ինքնաշարժական ձեւով»։(7)։ Բայց սա վերաբերում է միայն Մատեանի ծագումնաբանական աղբրին, գրական ակունքներին։ Մատեանի ֆնարական հերոսի ինքնաբացայայտման ակունքները իսկապէս գալիս են ապաշխարութեան շարականներից եւս, բայց սա ժանրային յատկանիշ չէ, այլ ֆնարական տրամադրութեան ընդհանուր գիծ է։

Ըստ Ստ. Մալխասեանի՝ Մատեանը «միանգամայն ինքնուրոյն բանաստեղ-

ծութիւն է, իսկ նրա մտայղացումը, ներքին իդէան՝ բոլորովին նոր ու միակն է աշխարհի գրականութեան մէջ»։(8)։ Մալխասեանց Մատեանը համարում է ողբերգութիւն՝ «իրբեւ ողբերի երգ կամ երգուած ողբ։ Բայց այս բառը, իր այժմեան նշանակութեամբ, իրբեւ դրամա, նշնապէս շատ լաւ յարմարում է գրքին»։(9)։

Մ. Մկրեանը Մատեանը համարում է «լիրիկական մեծ պոեմ»։ «Այն ընդհանուր գրականութեան մէջ եղած լիրիկական պոեմներից թերեւս ամենալիրիկականն է - գրում է Մկրեանը - որովհետեւ պատմողական-սյուսետային տարրը ընդհանուր կառուցուածքի մէջ բոլորովին բացակայում է, իսկ եթէ առանձին գլուխներում էլ երեւան է գալիս՝ աննկատելի լինելու չափ քիչ տեղ է բռնում»։(10)։

Մատեանը ֆնարական խոհափիլիսոփայական պոեմ է դիտում նաեւ ակադեմիկոս Էդ. Ջրբաշեանը. «Համաշխարհային գրականութեան մէջ դժուար է ցոյց տալ մի ուրիշ այսօրեան մեծ ծաւալի գուտ ֆնարական պոեմ, որը միաժամանակ այդօրեան լեցում լինելու ներքին շարժմամբ, հոգեբանական պատճառաբանուած անցումներով»։(11)։

Ժանրային այս բնութագիրը ստացել է միջազգային ճանաչում։ Բայց ինչպէս Հոմերոսի «Իլիականը» պոեմ է անուանուում, մինչդեռ դա համարժէ է նրա ժանրային էութեանը, այնպէս էլ Նարեկացու Մատեանը, լինելով ֆնարական երգիկի եւ անգուգական գործ, վերապահութեամբ միայն պէտք է անուանել պոեմ։ Մատեանի մասին կարելի է ասել այն, ինչ ասել է Լու Տոլստոյը իր «Պատերազմ եւ խաղաղութիւն» էպոպեայի մասին. «Ի՞նչ է Պատերազմ եւ խաղաղութիւնը։ Դա վէպ չէ, առաւել եւս՝ պոեմ չէ, էլ առաւել՝ պատմական ժրոմիկ չէ։ «Պատերազմ եւ խաղաղութիւնը» այն է, ինչ ցանկացել եւ կարողացել է

արտայայտել հեղինակը այն ձևի մէջ, որտեղ արտայայտուած է դա»(12):

Գեղարուեստական մտայնացումը չի կարող մարմնաւորուել այլ կերպ, քան գրական որեւէ ժանրի միջոցով: Նւ ինչ ժանր էլ լինի դա, նրա ձեւակաւորուածքային յատկանիշներն մէջ աւանդականը զուգակցումով է նորի եւ անհատականի հետ: Տեղի է ունենում ժանրերի եւ յատկանիշների փոխներքաւանցում: Աւելի բացայայտ է դրսեւորուում գրական սեռի, քան որոշակի ժանրի պատկերը: Ժանրատեսակները կարելի է շփոթել, բայց սեռերը՝ երբեք: Մատեանը բնարական սեռի ստեղծագործութիւն է: Իրրեւ այդպիսին՝ նա չի սամանագատուում բնարական սեռի աւանդական ձեւերից, այլ, ընդհակառակը, խորացնում է դրանք՝ ձգտելով անխառն բնարականութեան: Բնարական սեռի պատկերը այնքան է յստակ Մատեանի մէջ, որ Չոպանեանը յատուկ ուշադրութիւն է հրաւիրել, քէ «Իր աստուածաբանութիւնն իսկ տրամաբանող աստուածաբանութիւն մը չէ, այլ բնարական աստուածաբանութիւն մը»(13): Կա մի կարեւոր հանգամանք եւս: Ինչ ժանր էլ օգտագործել է Նարեկացին իր «միագոյ իրի հրաշակերտութիւնը» ստեղծելու համար, դրանց մէջ հիմնականը ողբի երգը, ողբի ժանրն է, եւ Մատեանն այլ բան չէ, քան ողբերի երգ, ողբերի գիրք:

Մատեանի գեղարուեստական ձեւը նախապատրաստուել է դարերով: Նարեկացին միայն հիմք եւ ելակէտ է ունեցել ողբը՝ ստեղծելով գեղարուեստական ինքնատիպ ժանրի ստեղծագործութիւն: «Գեղարուեստական տեսանկյունից նոր ձեւերը նախապատրաստուում են դանդաղ, դարերի ընթացքում - գրել է Մ. Բախտինը - դարաշրջանը միմիայն օպտիմալ պայմաններ է ստեղծում նոր ձևի վերջնական հասունման եւ իրականացման

համար»(14): Նարեկացու դարաշրջանը իրօք հասունացել էր ողբերի գիրք արգասաւորելու համար:

Վերնագիրը իւրայատուկ բնույթ ունի միջնադարի գրականութեան մէջ: Իրրեւ կանոն՝ այն գաղափար է տալիս՝ ա) երկի բովանդակութեան, բ) գրական տեսակի, գ) հեղինակի, դ) գրութեան ժամանակի եւ, վերջապէս, ե) պատուիրատուի մասին: Սա աւանդոյթ էր, ընդունուած կարգ: Մատեանի խորագիրը բաւարարում է նշուած հինգ կէտերից չորսին(15): Բովանդակութեամբ Մատեանը ապաշարական է օգտակար խօսքերի բազմաթափանծ դրուագների գիրք է, մեղքերի խոստովանութիւն, հոգեշահ խրատների եւ գղջական կանոնների կտակ, ցաւերի ներազդու սպեղանի եւ այլն, ինչպէս բնութագրել է Նարեկացին: Այն գրուել է ճգնակեաց անապատականների, կուսակրօն հայրերի եւ վանական եղբայրների խնդրանքով՝ առանձնութեան մէջ նրանով Աստծու հետ հաղորդուելու համար: Իրրեւ գրական տեսակ՝ այդ ստեղծագործութիւնը ողբերի մատեան է, ողբերի երգ, մաղթանքների եւ աղօթքների կտակ: Նւ, վերջապէս, Մատեանի հեղինակն է Նարեկականի վանական Գրիգոր Նարեկացին: Նա իր երկը կոչել է «Մատեան ողբերգութեան»:

Խորագրից բացի՝ բուն քնագրում Նարեկացին մէկ անգամ չէ, որ իր երկը կոչել է ողբերգութիւն, մերթ էլ՝ ողբերի մատեան, ողբերգութեան կտակ, եւ ամէն անգամ դա զուգորդում է աղօթքների, մաղթանքների եւ խոստովանութեան հետ: Մատեանը նա համարում է նաեւ «համայնապատում խոստովանութիւն» (Բան ԼԲ պ), որը, ինչ խօսք, ժամրային յատկանիշ չէ, այլ վերաբերում է տրամադրութիւնների եւ հոգեվիճակների ներքին միասնութեան արտայայտման եղանակին: Նարեկացու բնութագրմամբ, ամէնից առաջ, Մատեանը ողբերգութիւն է.

Շնորհեա կատարել ի խոյ համարում, արեւմտեղ կամաց,
 Զսկզբնաւորեալ մատեան մաղբամաց այսր
 ռոքերգութեան:

(Բան Բ ք)

Կամ՝

Եւ արդ՝ ժամգի ի գլուխ կատարման հասեալ
 Սակաւամասնեալ կտակի այսր ռոքերգութեան,
 Արա, տըր, վախճան դադարման առնուլ ...

(Բան Զէ ա)

Նման վկայութիւններ կան նաեւ մի
 շարք գլուխներում. Գ (ք, դ), Թ (ա), ԼԳ
 (ք), ԾԳ (ք), Հ (գ), ՀԱ (դ), ԶԸ (ք) եւ այլն:

Նարեկացիին իր Մատեանը
 փիւսաւորաբար մերկայացնում է որպէս մի
 ճայնարկու, որ իր փոխարէն Աստծու
 առջեւ միշտ պիտի խոստովանի
 քանաստեղծի մեղքերը:

Այս կացեւ սահման յանձնառեալ
 խոստովանութեան՝

Մշտնջենաւոր ճայնարկու առաջի խոյ,
 աւեմակալ ...

(Բան ԾԳ դ)

Անձնաւորման այս փաստից բխում
 է մի այլ եզրակացութիւն. քանաստեղծը
 մինչ այդ ինքն է հանդէս գալիս իրբեւ
 ճայնարկու: Սա ակնբեր է նրա մի
 չափազանց կարեւոր խոստովանութիւնից:
 Իձ գլխում Նարեկացիին յայտնում է, որ
 ինքը դիմում է ժողովրդական ողբի ձեւին,
 գրելու է յանգով՝ խօսքն աւելի յուզիչ եւ
 ազդու դարձնելու համար:

Ուստի եւ քաղմեալ իմ ի գլուխս
 Պարու ակմբից դասու այնք երախամաց,
 Որք գլխեացն յեղինակեմ քանաստեղծութիւն,
 Եւ եւ ընդ մասին մտքին հեծութեամբ,
 Աւագահան ճայնարձակութեամբ
 Զանձինս տարածանեմ զվշտակութիւն:

(Բան ԻԶ ա)

Պարզ ասած՝ Նարեկացիին ուզում է
 լալականների դասի պարագլուխ դառնալ
 եւ սգալ իր վշտերը: Դառնալ ճայնարկու,
 ռոքասացների պարագլուխ, եղբրամայր -
 սա ժողովրդական ոգուն մօտեմալու մեղքին

եւ սգալ իր վշտերը: Դառնալ ճայնարկու,
 ռոքասացների պարագլուխ, եղբրամայր -
 սա ժողովրդական ոգուն մօտեմալու մեղքին
 պահանջ էր միայն, այլ նաեւ ժանրի
 մաշոնտրութիւն: Եւ, իսկապէս, Նարեկացիին
 Մատեանը մտայնացել է իրրեւ ողբ: Սա
 ակնբեր է նաեւ Երեմիա մարգարէի ողբի
 եւ իր ողբի միջեւ տարած գուգահեռից:
 Արդ եւ պատմեմ աստեմար դարձեալ ոչ զմեզ
 Երուսաղէմի,

Ըստ մարգարէին երամեամառութեան, որ առ
 ժողովուրդն մաթմի,
 Եւ կամ տանն Յակոբու՝ գամարեմութիւնս
 մարա,

Այլ իմոյս ժամանցից յայտնութեան:

Դամգի աւաղ ընդ աղէտս աեհու յարելով, ըստ
 մարգարէին,
 Յանդիմանցից զիս ինքն ինձն իմովս ճայնիւ,
 ըստ աղոյժառողին,
 Որպէս զի յանձնառեալ յայսմ հաւայնազատուս
 խոստովանութեան,
 Ոչ կարատացեալ կրկնակին՝

Միանգամայն իսպառ սրբեցայց արեւմալ
 հրամանաւ էիդ:

(Բան ԼԲ ք)

Մարգարէն ողբացել է Երուսաղէմի
 մեղքերը: Բանաստեղծը ողբում է իր
 մեղքերը: Եւ երկուսն էլ ըմտել են
 գրական նոյն, ժանրը՝ ողբը: Դա
 ժողովրդական բանահիւսութեան սիրուած
 ժանրերից էր, համաշխարհային
 գրականութեան հնագույն ժանրերից մէկը:
 Մագնիւլ Բաղդան եւ սգի ժողովրդական
 երգերից, ողբն արդէն ուրույն ժանր էր
 յունա-հռոմէական անտիկ գրականութեան
 մէջ: Հայ մատենագրութեան մէջ մինչեւ
 Նարեկացիին կային ողբի դասական
 օրինակներ: Յիշեմք Մովսէս Խորենացու
 եւ Դաւթակի Գեորգիի քարճարուեստ
 ողբերը: Ժողովրդական ողբերգը կենդանի
 էր ոչ միայն Նարեկացու դարաշրջանում,
 այլեւ շատ դարեր անց: Ի հարկէ,
 Նարեկացիին ծանօթ էր նաեւ ողբի տեսական
 ըմբռնումներին: Առանց անցեալի
 գեղարուեստական աւանդաւորների
 յուրացման եւ ստեղծագործական

մօտեցման, մա չէր կարող յանգել այն մոր
 ձեռի կիրառմանը, որն առաւել լաւ էր
 համապատասխանում մրա մտայղացմանը:
 «Ժաճարային ձեռն անհմար է ըմբռնել մրա
 կենսական արմատներին ցուրտ,
 դարաշրջանի գաղափարական պայքարից,
 տուեալ գրողի ստեղծագործութեան
 բովանդակութիւնից եւ ոճից, գրական
 աւանդոյթներից դուրս»(16) – գրել է Լ.
 Պ. Գրոսմանը:

Նարեկացու համար այդ աւանդոյթ-
 ները երեւն են. ա) աստուածաշնչական
 մարգարէութիւնները եւ այլ գրքեր, բ)
 ազգային գրականութիւնը՝ ողբեր,
 ապաշխարութեան շարականներ եւ այլն,
 գ) ժողովրդական լալեաց եւ քաղման
 երգերը: Ողբն ընդգրկում է կեանքի լայն
 ոլորտներ եւ հնարաւորութիւն է ընձեռում
 արձագանքելու ժամանակի ցաւին ու դաւին,
 ժողովրդի հասարակական–գաղաքական
 ճգնաժամներին ու բաղձանքներին: Հեղինակը
 կարող է ազատ բացել իր մերաշխարհը,
 արտայայտել իր խոհերն ու զգացումները,
 իր յուզական վերաբերմունքը: Ահա թէ
 ինչու Նարեկացին ողբի ժամրի մէջ գտել
 է իրեն յուզող մտքերն ու զգացումներն
 արտայայտելու գեղարուեստական ամենա-
 կատարեալ ձեւը: Նա մոր կերպարանք է
 տուել ողբին: Դա էլ հնարաւորութիւն է
 տուել պատկերել ժամանակի մարդուն՝
 ապրումների իր ողջ բարդութեամբ,
 ժողովրդական կեանքն ու միջավայրը՝
 լայն ընդգրկմամբ, արտայայտելու իր
 խոհերը տիեզերքի, Աստուծոյ, մարդու,
 կեանքի ու մահուան մասին, փիլիսոփայելու
 չարի եւ բարոյ, սիրոյ եւ ատելութեան,
 յոյսի եւ հաւատի, միւսի եւ ոգու,
 իմանալի եւ անիմանալի ժամանակների
 մասին, քարոզելու, մերթողելու,
 պարսաւելու, մինչեւ իսկ մզով կարդալու:

Ինչ վերաբերում է ողբի տեսական
 ըմբռնմանը, ապա Նարեկացին ծանօթ է
 եղել «Պիտոյից գրքի» սահմանմանը: Ըստ

այս սահմանման՝ ողբերգականները «զինոցն
 երգելով պատմութիւնս, այնպիսի իմն
 ըստ մոցա քաջութեանց զուգահաւասար
 եւ զիրեանցն ցուցին իմաստութիւն, մինչ
 զի եւ խառնելով եւ քաջոր մուգեղանութիւնս
 ձայնիցն, եւ զյաջողակ խրատուցն
 կարգաւորութիւնս յարմարական, որով
 սփոփեալ զբնաւ վշտացեալ սգաւորացն
 միտքարեղով անձինս»(17): Ծաւ՝ տա-
 ռապանքի համար, սփոփանք՝ միտքարելու
 համար – ահա ողբի այս բանաձեւը:
 Քրիստոնէական աշխարհայեցողութեանը
 խորթ է մարդու կործանման
 անխուսափելիութիւնն ու անյոյս ողբը:
 Նարեկացին գիտէր մաւ Դիոնիսիոս
 Թրակացու բերականութեան եւ մրա հայ
 մեկնիչների կարծիքները: Ստեփանոս
 Սիւնեցի, օրինակ, այսպէս է սահմանել
 ողբերգութիւնը . «Ողբերգութիւն
 զմիտքարական ասէ, զորս ի վերայ մե-
 ռելոց եւ կամ այլ ինչ թշուառութիւն կրից
 առնեն»(18): Այստեղ ողբերգութիւն
 բառը համարժէ է յունարէն Իրիտաս
 (սգերգ, ողբ) բառին եւ ոչ թէ Թրակոսիա
 (տրագեդիա, ողբերգութիւն, նոխագերգու-
 թիւն) հասկացութեանը: Նարեկացին ողբում
 է մարդկային անձի թշուառութիւնը, իր
 հոգու կորուստը, ահեղ դատաստանի
 պատկերից ծնուած երկիւղը: Սւ որովհետեւ
 մա շատ լաւ գիտէր, որ ողբի երգին պիտի
 յոյսի մուգ խառնել,(19) ուստի մա
 Մատեանը համակել է մաւ փրկութեան
 յոյսի խոր լաւատեսութեամբ: Ողբի
 տեսական այս աղբիւրը Նարեկացին
 գեղարուեստորէն տուել է այսպէս.

Քային աղբիսի առ ինչ մաղոյեցից,
 Յարմարեալ դարձեալ ի միւս բանս՝
 Ջատա ողբերգութեան այսր մատնի
 Լցից քախտութեամբ եւ հեծեծաւաւ:
 Այլ առեալ խառնցից, ի տաւորի հառութիւն,
 Ընդ ցաւոյն՝ զգեղմ,
 Ընդ վիատութեան՝ զխախտյաւ,
 Ընդ յուսահատութեան՝ զիշտատեղ առաւա
 հաստողիդ,

Ընդ տխրութեան՝ զսփոփանալ,
Ընդ իմուսն դառնութեան՝ զբաղցրութիւն
կենտարարիդ,

Ընդ պատիծ արիւնիմ՝ զշնորհն,
Ընդ պարտս ամիծիցմ՝ զազատարար
արեւնալիւնդ,

Ընդ մարմնայ մանուս՝ զամենայնիւ որոգութիւնդ:
(Բան ԾԳ ք)

Աստուեց, որ Նարեկացիին հայ մատենագրութեան մէջ ունէր դասական ողբի օրինակներ: Լաւագոյնը Մովսէս Խորենացու ողբն էր, ուր պատմափոր ծանր խոհերն ու զգացումները ձուլուած են ժամանակի բարբերի բնադատութեան շիկացած կրքին, ուր անհատի նականատգրի ողբերգականութիւնից մա նայում է ժողովրդի նականատգրի ողբերգականութեանը՝ յայսի շող որոնելով գալիքի հեռապատկերում: «Իր բնարական էջերէն ումանց մէջ – գրել է Ա. Զոպանեանը – Նարեկացիական ռինմ իսկ մախագիծը տուած է» (20): Կարելի է աւելացնել՝ Խորենացիին արդէն տուել էր Նարեկացու ողբի մախագիծը:

Զգոնելով ապացուցել, որ Մատենանը մտայղացուել է որպէս ողբ, եւ հետո՛ւ եմ այդ երկը միջնադարեան ողբերի շարքը դասելուց: Մատենանը եզակի ստեղծագործութիւն է, ինքնատիպ մի երկ, որի գրական ժանրը հենց ինքն է եւ որը չունի ոչ իր մախորդը եւ ոչ էլ հետնորդը՝ բառիս բուն իմաստով: Դա համադրական երկ է, եւ Նարեկացիին չէր լինի իսկապէս մեծ ու համապարփակ, եթէ նրա ստեղծագործութեան մէջ չաւարտուէր հիւնը եւ սկզբնաւորուէր ճորը՝ անհատական փնտրութիւնը: Գեղարեստական երկը չի կարող ստեղծուել մախպէտ տրուած պատրաստի ձեւերով: Նրա ծնունդը ստեղծագործական տեղագրին որոնումների արդիւնք է, յայտնագործութիւն: Հանճարը միշտ էլ ժամերը վերածնունդ է ըստ իր տարեբրի: Նա օրէնադիր է եւ ուղեմիջ:

ԱՂԻԻԻՆԵՐ ԵՒ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 Է դ. Զրբաշեան, Գրականութեան տեսութիւն, Երևան, 1972, էջ 355

2 Г.Н.Поспелов. Теория Литературы, М., 1978, с. 230.

3 Տես՝ Հայկական մոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան մոր կեանքի, կազմեց Հ. Արսեն Դազիկեան, հ. 1, Վենետիկ, 1909-1912 էջ 471-499 Տես նաեւ՝ ԳՆՄՈ, էջ 197-224

4 В.В.Быхов. Эстетика поэзии армянского, М., 1981, с. 208-209.

5 Գրիգոր Սաֆարեան, Գրիգոր Նարեկացի եւ իր Նարեկ աղօթատետեանը, Ֆրեզո, 1951, էջ 2:

6 Ա. Զոպանեան, Երկեր, էջ 283

7 Մ. Արեւեան, հ. Գ, էջ 620

8 Ստ. Մախաւեանց, Մատենագիտական դիտողութիւններ, էջ 229

9 Նոյն տեղում, էջ 230

10 Մ. Արեւեան, Գրիգոր Նարեկացի, էջ 173

11 Է. Զրբաշեան, Գեղարեստութիւն եւ գրականութիւն, Երևան, 1983, էջ 107

12 А.Н.Толстой. О литературе, М., 1955, с. 115.

13 Ա. Զոպանեան, Երկեր, էջ 273

14 М.М.Бахтин. Проблемы поэтики А.О.Смоленского, с. 43.

15 ԳՆՄՈ, էջ 178, 973-977

16 А.Гроссман. Поэтика А.О.Смоленского, М., 1923, с. 15.

17 Մովսէս Խորենացի, Մատենագրութիւնք, էջ 369

18 Н.Адоны. Анонимный Фракинский и Армянские полководцы, Петроград, 1915, с.193

19 Նոյն տեղում, էջ 57: Նայի Նշեցիմ (13րդ դ.) ողբերգութիւնք բառը բացատրում է այսպէս. «Ողբերգութիւն կալի ի միւս, որ ընդ ողբն գլուսով մուսան խառնեն» (Նայի Նշեցի, Վերջնաժողովի փրականութեան, Երևան, 1966, էջ 72): Իսկ Առաքիլ Սիւնցիին այսպէս է սահմանել ողբը. «Զի՞նչ է ողբն, եւ զի՞նչ Երգն: Այսինքն՝ ողբ՝ զալմ աւել, երգ՝ գարախութիւնն, այսինքն՝ զի այնպիսի բան չիմալ էիմ իմաստասերքն, որ կեան լաց է, եւ կեան՝ ուրախութիւն – յայն կերպի պիտի ըմբռնուի: Դարձալ՝ «ողբերգութիւն», այսինքն՝ թէ ընդ ողբն պարտ է եւ գլուսով մուսան խառնել» (Առաքիլ Սիւնցի, Յաղագս փրականութեան համառոտ լուծումք, Լոս Անջելես, 1982, էջ 87)

20 Ա. Զոպանեան, Գրագէտն ու մարդը Մովսէս Խորենացիի մէջ, «Ամսօր», Փարիզ, 1931, մու. 1-2, էջ 10

Ա. ՂԱԶԻՆԵԱՆ